վարժարանները, իսկ համալսարան ունեն երկու հատ՝ մէկը Տօկիօ, միւսը Կիօտօ, երկուսն էլ արքունի: Կան եւ ազատ համալսարաններ: Դրանցից մէկը յատկապէս կանանց համար է, հիմնուած Տօկիօյում 1901-ին: Ընդհանրապէս կանանց բարձրագոյն կրթութեան խնդիրը այժմ մեծ քայլերով է առաջ գնում, մանաւանդ շնորհիւ Գարուկա թագուհու ձեռներէցութեան: Ճապոնն ունի արդէն իր գիտնականները, որոնք անուն են վայելում նոյն իսկ Եւրոպայում: Ճապոնի արագ առաջադիմութեան գլխաւոր նշաններից մէկն է եւ նրա մամուլի արագ զարգացումը: Նրանց պարբերական հրատարակութիւնների թիւը հասնում է մինչեւ 1500-ի (Dumolard): Նրանց գինն էլ շատ էժան է: Դա աւելի եւս զարմանալի է, եթէ յիշենք, որ ճապոնական այբուբէնը շատ բարդ է եւ դեռ չէ թօթափել չինականի լուծը: Ճապոնական այբուբէնով, որ 48 տառ ունի, կարելի է արտայայտել միայն հասարակ խօսակցութիւնը, իսկ աւելի բարդ գաղափարների արտայայտութեան համար պէտք է դիմել 15 հազար չինական նշանների օգնութեանը, այնպէս որ պարզ այբուբէնի պահանջը այժմ խիստ մեծ է եւ երեւի երկար սպասել չի տալ:

Այժմեան այբուբէնով ճապոնացիք գրում են վերեւից ներքեւ, իսկ տողերը իրար յաջորդում են աջից ձախ: